



Ստամբուլյան

Կոնվենցիա.

Քաղաքականության
հ ա մ առ ո տ ա գ ի ը

Հ Ա Կ Ի Ր Ճ
Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

«Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան¹ (այսուհետ նաև Ստամբուլյան կոնվենցիա/Կոնվենցիա) միջազգային պայմանագիր է, որի նպատակն է հռչակել կանանց և ընտանեկան բռնության կանխարգելումն ու դրա դեմ պայքարը:

Այն նպատակաուղղված է ամբողջությամբ վերացնելու նման բռնության նկատմամբ հանդուրժողականությունն ու կարևոր գործիքակազմ է Եվրոպան և նրա շրջակա տարածքներն ավելի անվտանգ դարձնելու համար:

Բռնության կանխարգելումը, բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը և բռնություն գործադրող անձանց պատասխանատվության ենթարկելը Կոնվենցիայի անկյունաքարերն են: Այն նաև նպատակ ունի փոխելու անհատների պատկերացումները՝ կոչ անելով հասարակության բոլոր անդամներին փոխելու իրենց վերաբերմունքը բռնության նկատմամբ: Ըստ էության, այն մի նոր կոչ է՝ ավելի մեծ հավասարություն հաստատելու կանանց և տղամարդկանց միջև, քանի որ կանանց նկատմամբ բռնությունը

նր խորապես արմատացած է կանանց և տղամարդկանց անհավասարության պայմաններում և հավերժացել է անհանդուրժողականության և մերժման մշակույթում:

Կոնվենցիան առանց խտրականության տարածվում է բոլոր կանանց և աղջիկների վրա՝ անկախ տարիքից, ռասայից, կրոնից, սոցիալական ծագումից, միգրանտի կարգավիճակից, գենդերային ինքնությունից և սեռական կողմնորոշումից:

Այն հստակ ուղերձ է հղում, որ կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը մասնավոր հարցեր չեն: Ընդհակառակը, ընդգծելու համար ընտանիքի ներսում կատարվող հանցագործությունների առանձնահատուկ տրավմատիկ ազդեցությունը ավելի խիստ պատիժ կարելի է նշանակել հանցագործին այն դեպքում, երբ բռնության ենթարկված անձը նրա կինն է, զուգընկերը կամ ընտանիքի անդամը:

¹ Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/rms/090000168008482e>:

Կոնվենցիայի
կառուցվածքը
հիմնված է
«չորս P-երի»
սկզբունքի
վրա.

1. կանխարգելում (*prevention*),
2. պաշտպանություն և բռնության ենթարկված անձանց աջակցություն (*protection*),
3. հանցագործների հետապնդում (*prosecution*),
4. ինտեգրված քաղաքականություն (*policies*):



ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

- փոխել վերաբերմունքը, գենդերային դերերը և կարծրատիպերը, որոնք կանանց նկատմամբ բռնությունը դարձնում են ընդունելի,
- բարձրացնել իրազեկությունը բռնության տարբեր ձևերի և դրանց տրավմատիկ բնույթի վերաբերյալ,
- ներառել հավասարության խնդիրների շուրջ ուսուցողական նյութերը բոլոր մակարդակների կրթության ուսումնական ծրագրերում,
- պատրաստել բռնության ենթարկված անձանց հետ աջխատող մասնագետներ
- և այլն:



ՀԵՏԱՊԼՈՒՄ

- ապահովել, որ կանանց նկատմամբ բռնությունը քրեականացվի և համապատասխան կերպով պատժվի,
- ապահովել, որ մշակույթի, սովորույթների, կրոնի կամ այսպես կոչված «պատվի» հիման վրա բերվող պատճառաբանություններն անընդունելի համարվեն ցանկացած բռնարարքի համար,
- ապահովել, որ հետաքննության և դատական վարույթների ընթացքում բռնության ենթարկված անձանց համար մատչելի լինեն պաշտպանության հատուկ միջոցները,
- ապահովել, որ իրավապահ մարմիններն անմիջապես արձագանքեն օգնության կոչերին և համարժեքորեն գործեն վտանգավոր իրավիճակներում
- և այլն:



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- ստեղծել մասնագիտացված աջակցության ծառայություններ, որոնք տրամադրում են բժշկական օգնություն, ինչպես նաև հոգեբանական և իրավաբանական խորհրդատվություն բռնության ենթարկված անձանց և նրանց երեխաներին,
- ստեղծել բավարար քանակի ապաստարաններ,
- ներդնել անվճար, շուրջօրյա հեռախոսահամարների «թեժ գիծ» ծառայություն
- և այլն:



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- ապահովել, որ նկարագրված բոլոր միջոցները կազմեն համապարփակ և համակարգված քաղաքականության մի ամբողջություն և կանանց նկատմամբ բռնությանը և ընտանեկան բռնությանը տան համալիր պատասխան:

Կոնվենցիան ստեղծել է մշտադիտարկման մեխանիզմ՝ գնահատելու, թե ինչպես են նրա դրույթներն իրականացվում գործնականում: Մշտադիտարկման մեխանիզմը կազմված է երկու հենասյուններից.

1. Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ (GREVIO)², որն անկախ փորձագիտական մարմին է, և

2. Կոնվենցիայի մասնակից պետությունների Կոմիտե³, որը քաղաքական մարմին է՝ կազմված է Կոնվենցիայի մասնակից պետությունների պաշտոնական ներկայացուցիչներից:

Նշված մարմինների եզրակացություններն ու հանձնարարականներն օգնում են ապահովելու երկրների համապատասխանությունը Կոնվենցիային և երաշխավորելու դրա երկարաժամկետ արդյունավետությունը:

² Տե՛ս <https://www.coe.int/en/web/istanbul-convention/grevio>:

³ Տե՛ս <https://www.coe.int/en/web/istanbul-convention/committee-of-the-parties>:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ՎԱՎԵՐԱՑՄԱՆ
ՀԱԶՈՂՎԱԾ
ՕՐԻՆԱԿՆԵՐ

Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմամբ պետությունները ստանձնում են պարտականություն՝ ակտիվ քայլեր ձեռնարկելու ընդդեմ գենդերային բռնության: Այդ քայլերը բազմաոլորտային բնույթ են կրում և իրենց ազդեցությունն են արտացոլում ինչպես օրենսդրական ոլորտում, քաղաքականությունների մշակման գործընթացում, այնպես էլ նոր ծառայությունների ներդրման և առկա ծառայությունները զոհակենտրոն մոտեցմամբ իրագործելու ուղղությամբ:

Այս հատվածում անդրադարձ է կատարվում Եվրոպական միության (ԵՄ) անդամ պետություններում իրականացված այն գործողություններին, որոնք Ստամբուլյան կոնվենցիայի վավերացմամբ համապատասխան փոփոխություններ են իրականացրել՝ ապահովելու արդյունավետ պայքարն ընդդեմ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության:

ԵՄ անդամ բոլոր պետությունները բռնության տարբեր ձևերի դրսևորումները քրեականացրել են իրենց ներպե-

տական օրենսդրությամբ: Մեծ մասամբ քրեականացված հողվածները, ի թիվս այլնի, տարածվում են նաև կանանց նկատմամբ կիրառվող բռնության նկատմամբ:

Կանանց նկատմամբ բռնությունն ինքնին համարվում է կատարված արարքը ծանրացնող հանգամանք մի շարք երկրների քրեական օրենսդրությամբ. երբ արարքը կատարվում է ընտանիքի անդամի, զուգընկերոջ կողմից կամ այն սեռային/գենդերային խտրականության հիմքով է կատարվել, ապա կիրառվում են առավել խիստ պատասխանատվության միջոցներ: Նման կարգավորումներ են առկա Բելգիայի⁴, Բուլղարիայի⁵, Էստոնիայի⁶, Ֆրանսիայի⁷ և Իտալիայի⁸ օրենսդրությամբ: Իր հերթին Շվեդիայի⁹ քրեական օրենսգիրքը «կնոջ անձեռնմխելիության կոպիտ խախտումը» վերտառությամբ առանձին հանցակազմ է նախատեսում որպես կանանց նկատմամբ բռնության տեսակ:

4 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8240/file/Belgium_CC_1867_am2018_fr.pdf:

5 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4152/file/PENAL_PROCEDURE_CODE_am2011_en.pdf:

6 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8244/file/Estonia_CC_am2019_en.pdf:

7 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8546/file/France_CC_am012020_fr.pdf:

8 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/4357/file/Italy_CPC_updated_till_2012_Part_1_it.pdf:

9 Տե՛ս https://www.legislationline.org/download/id/8569/file/Sweden_CC_1962_am022020_en.pdf:

Օրենսդրական փոփոխությունների իրականացումն առավել իրատեսական է, երբ այն զուգորդվում է քաղաքականությունների մշակման գործընթացում, ինչն էլ իր հերթին ներառվում է պետության ռազմավարության կամ ազգային գործողությունների ծրագրերում: ԵՄ անդամ մի շարք պետություններ իրենց ազգային գործողությունների ծրագրերում անդրադարձել են առհասարակ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցերին: Օրինակ՝ Բելգիայում¹⁰ և Գերմանիայում¹¹ ազգային գործողությունների ծրագրերն ուղղված են առհասարակ կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին, մինչդեռ որոշ երկրներ անդրադառնում են կանանց նկատմամբ բռնության միայն մեկ՝ ընտանեկան բռնության դրսևորմանն ու դրա դեմ պայքարին (Լեհաստան, Ռումինիա)¹²:

Նշված գործընթացում կարևոր է իրականացված քաղաքականությունների հետագա գնահատումը, ինչը ցույց է տալիս պետության կատարած գործողությունների արդ-

10 Տե՛ս http://igvm-iefh.belgium.be/sites/default/files/comprehensive_press_file_0.pdf:

11 Տե՛ս <https://www.bmfsfj.de/blob/93228/77ac63e8f600d39c8fb5ae9ed2080653/aktionsplan-ii-zur-bekaempfung-von-gewalt-gegen-frauen-data.pdf>:

12 Տե՛ս [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596815/IPOL_STU\(2017\)596815_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596815/IPOL_STU(2017)596815_EN.pdf):

յունավետությունը: Օրինակ՝ Էստոնիայի¹³ փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետությունում զուգահեռաբար իրականացված օրենսդրական և քաղաքականության մշակման գործընթացի արդյունքում նվազել են ընտանեկան բռնության դեպքերով մահացության ցուցանիշներն ու զուգահեռաբար աճել են ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրված պաշտպանական որոշումների քանակը:

Ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի հարցում կարևոր նշանակություն ունեն նաև Կոնվենցիայով ամրագրված ծառայությունների առկայությունը («թեժ-գիծ» ծառայություն, գենդերային բռնության դեպքերով միասնական դատաբազա, աջակցության կենտրոններ, ապաստարաններ, իրավաբանական, հոգեբանական աջակցություն և այլն):

ԵՄ անդամ բոլոր պետություններում առանց բացառության գործում են «թեժ գիծ» ծառայությունները, որոնք մասնագիտացված են կամ կանանց նկատմամբ բռնության հարցերով, կամ առհասարակ բռնության հարցե-

րով: Որոշ պետություններում, օրինակ, «թեժ-գիծ» ծառայություններն ունեն հատուկ ուղղվածություն՝ ընտանեկան բռնություն, սեռական բռնություն, որոնք հասանելի են ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար (Բելգիա, Հունգարիա, Լյուքսեմբուրգ, Լեհաստան)¹⁴: Որոշ երկրներում, ինչպես օրինակ՝ Գերմանիայում¹⁵ «թեժ-գիծ» ծառայությունը հասանելի է պետության տարածքում ապրող անձանց համար շուրջ 15 լեզուներով՝ պայմանավորված երկրում տարածված բազմալեզվությամբ: Ի հավելումն «թեժ-գիծ» ծառայությունների՝ որոշ պետություններ կիրառում են նաև «թեժ-գիծ» ծառայությունների այլընտրանքային տարբերակ: Օրինակ՝ Ֆրանսիայում¹⁶ գործարկվում է հեռախոսային հատուկ հավելված, որն ապահովում է յուրաքանչյուր անձի համար արագ հասանելիություն ծառայություններին: Ավելին, պետության տարածքում գործարկվում է այսպես կոչված «Հեռախոս առավել վտանգի համար» (Téléphone Grave Danger¹⁷), որը հատուկ հեռախոս է, որ հնարավորություն է տալիս

14 Տե՛ս [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596815/IPOL_STU\(2017\)596815_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596815/IPOL_STU(2017)596815_EN.pdf):

15 Տե՛ս <https://www.hilfetelefon.de/das-hilfetelefon/beratung/beratung-in-17-sprachen.html>:

16 Տե՛ս <http://www.justice.gouv.fr/aide-aux-victimes-10044/un-nouvel-outil-pour-protoger-les-femmes-victimes-de-violence-27491.html>:

17 Տե՛ս <https://www.prefectures-regions.gouv.fr/content/download/9761/62904/file/T%C3%A9l%C3%A9phone%20grave%20danger-1.pdf>:

13 Տե՛ս https://www.valitsus.ee/sites/default/files/content-editors/arengukavad/ves_2015._aasta_luhikokkuvote_kinnitatud.pdf:

բռնության ենթարկված անձին անմիջապես կապ հաստատել համապատասխան մարմինների, ոստիկանության հետ՝ միաժամանակ թույլ տալով պարզել նաև վերջինիս գտնվելու վայրը: Այն տրամադրվում է բռնության ենթարկված անձին դատախազի կողմից՝ գնահատելով յուրաքանչյուր դեպքում դրա նպատակահարմարությունն ու շատ հաճախ տրամադրվում է այն դեպքերում, երբ բռնարարն ու բռնության ենթարկված անձը չեն բնակվում միասին, և առկա է արգելք՝ մոտենալու բռնության ենթարկված անձին, հետևաբար նաև առկա է հավանականություն, որ բռնարարը կարող է փորձ կատարել այս կամ այն կերպ մոտենալ բռնության ենթարկված անձին:

Անդրադառնալով ԵՄ անդամ պետություններում գենդերային բռնության դեպքերով դատաբազաներին՝ կարելի է առանձնացնել Գերմանիայի ոստիկանության կողմից հավաքագրվող բազան¹⁸, որտեղ առաձնացված են քրեական օրենսգրքով ամրագրված բռնության բոլոր տեսակները, բռնություն գործադրող անձի և բռնության ենթարկված անձի հարաբերությունների տեսակը և այլ մանրա-

մասներ: Հաջողված օրինակ է նաև Իսպանիայի¹⁹ փորձը, որտեղ առհասարակ հավաքվում են բոլոր մարմիններից ստացված գենդերային բռնության դեպքերը:

Ստամբուլյան կոնվենցիայի վավերացումն ու վերջինիս հաջորդական և բազմաոլորտային քաղաքականության շարունակական իրականացումը կարևոր գործիքակազմ է՝ կանխարգելելու գենդերային բռնության դրսևորումներն ու դրանց առկայության դեպքում պատշաճ արձագանքելու բռնության դրսևորումներին ու դրանից առաջացած հետևանքներին:

18 Տե՛ս https://www.bka.de/DE/AktuelleInformationen/StatistikenLagebilder/PolizeilicheKriminalstatistik/PKS2015/pks2015_node.html?jsessionid=BE64ADC5624E9A942EA32471B3181DEE.live2291:

19 Տե՛ս <http://estadisticasviolenciagenero.mssi.gob.es/>:

**ԻՐԱՎԻՃԱԿԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 28.12.2017 թվականի նիստում²⁰ հավանության է արժանացրել Կոնվենցիայի ստորագրումը, ինչով պայմանավորված՝ 18.01.2018 թվականին ՀՀ-ն ստորագրել է²¹ Կոնվենցիան:

2019 թվականին Կոնվենցիայի հնարավոր վավերացման գործընթացի վերաբերյալ քննարկումների ընթացքում մի շարք խմբեր և անձինք տարատեսակ շահարկումների²² ենթարկեցին Կոնվենցիայի բովանդակությունն ու այդպեղանակ փորձ կատարվեց խոչընդոտելու վերջինիս վավերացման գործընթացին:

Ներկայումս առկա չէ որևէ պաշտոնական տեղեկատվություն, թե ինչ ժամկետներում և երբ է պետությունը նախատեսում վավերացնել Կոնվենցիան ու կատարել բազմաո-

20 Տե՛ս <https://www.e-gov.am/sessions/archive/2017/12/28/>:

21 Տե՛ս <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/210/signatures>:

22 Տե՛ս Հավելված 1, որտեղ անդրադարձ է կատարվում Կոնվենցիայի շուրջ ստեղծված շահարկումներին:

լրտային փոփոխություններ գենդերային բռնության կանխարգելման և դրա պայքարի գործում: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության ու դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրում²³ ևս որևէ կերպ անդրադարձ չի կատարվել Կոնվենցիայի վավերացման հարցին, մինչդեռ այն առանցքային փաստաթուղթ է:

Թեպետ 2017 թվականին Հայաստանում ընդունվեց «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք²⁴ ու փոփոխություններ կատարվեցին հարակից իրավական ակտերում, այնուամենայնիվ մինչ օրս Հանրապետությունում առկա չէ համակարգային արձագանք գենդերային բռնության դեպքերին. ներպետական օրենսդրությունը կարելի է բնութագրել որպես գենդերային առումով չեզոք, իսկ պետության կողմից տրամադրվող ծառայությունները՝ անհամապատասխան զոհակենտրոն մոտեցմանն ու գենդերային բռնության ենթարկված անձի իրավունքների և շահերի պաշտպանությանը:

²³ Տե՛ս <http://www.justice.am/page/575>:

²⁴ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118672>:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի կառուցակարգերի ոչ լիարժեքության մեկ այլ դրսևորում է պատասխանատվության ինստիտուտի անկատարությունը: Հայաստանում ընտանեկան բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմ ներպետական օրենսդրությամբ:

ՀՀ քրեական օրենսդրությամբ քրեորեն պատժելի արարքներ են համարվում ֆիզիկական և սեռական բռնության որոշ տեսակներ: Օրենսդրությունը մասնակիորեն կարգավորում է նաև հոգեբանական բռնությունը, այնուամենայնիվ, ներպետական օրենսդրությամբ քրեականացված չէ առհասարակ տնտեսական բռնությունը, ինչպես նաև հետամտումը, հարկադիր ամուսնությունը, հղիության արհեստական ընդհատումը հարկադիր կատարելը և այլն: Հարցի կապակցությամբ Կոնվենցիայի կարգավորումները (հոդվածներ 33-44) ևս վկայում են, որ բռնության դեմ պայքարի միջոցներից է այդ արարքը կատարած անձանց համար պատասխանատվության միջոցների նախատեսումը:

Առհասարակ արդյունավետ միջոց է ընտանեկան բռնության քրեականացումը: Ընդ որում դա կարող է դրսևորվել կամ մեկ հանցակազմի նախատեսմամբ, կամ ընդհանուր

հանցակազմերով գործերը քննելիս որպես պատասխանատվությունն ու պատիժը ծանրացնող հանգամանք նախատեսել ընտանեկան բռնության հետևանքով կատարված արարքը²⁵:

Խնդրահարույց է նաև ընտանեկան բռնության դեպքերով հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի իրավական կարգավորումները: Ներկայումս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով²⁶ նախատեսվում է, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց՝ դատախազն իրավասու է հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքերում քրեական գործը պետք է հարուցվի և քննվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չպետք է դադարեցվի: Այնուամենայնիվ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով

ձևակերպված չափանիշը գնահատելիս կարևոր է հաշվի առնել, որ ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի չափորոշիչների, որոնցով գնահատվում է ոտնձգողի վարքագիծը՝ ներպետական կարգավորումը հիմնված է բացառապես տուժողի դրության վրա: Հարցի կապակցությամբ «Օփուզն ընդդեմ Թուրքիայի»²⁷ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից սահմանվել են առավել ընդգրկուն չափանիշներ, որոնք ներառում են հետևյալ հարցադրումները՝ իրավախախտման ծանրությունը, բռնության ենթարկված անձի վնասվածքները ֆիզիկականն են, թե՛ հոգեբանական, եթե բռնություն գործադրած անձը զենք է կիրառել, եթե բռնություն գործադրած անձը հարձակումից հետո որևէ ձևով սպառնացել է, եթե բռնություն գործադրած անձը պլանավորել է հարձակումը, ընտանիքում ապրող որևէ երեխայի վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), բռնություն գործադրած անձի՝ նորից իրավախախտում կատարելու հնարավորությունները, տուժողի կամ ցանկացած այլ անձի, որը կարող էր ներգրավված լինել, առողջությանը և անվտանգությանը ներկայացվող շարունակական սպառնալիքը, բռնության ենթարկված անձի

²⁵ Տե՛ս հոդված 46, <https://rm.coe.int/168046246d>:

²⁶ Տե՛ս հոդված 183, մաս 4, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=141381>:

²⁷ Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng-press#%7B%22itemid%22:%7B%22003-2759276-3020932%22%7D>:

ներկայիս հարաբերությունը բռնություն գործադրած անձի հետ և նրա ցանկություններին հակառակ իրականացվող քրեական հետապնդման հետ մեկտեղ շարունակվող հարաբերության վրա ազդեցությունը, հարաբերության պատմությունը, մասնավորապես, եթե նախկինում տեղի է ունեցել բռնության այլ դեպք, ինչպես նաև բռնություն գործադրած անձի քրեական անցյալը, մասնավորապես՝ նախկինում բռնություն կատարելը²⁸: Նշվածը հաշվի առնելով՝ պետք է ապահովել, որ դատախազներն իրավունք ունենան հարուցել և շարունակել վարույթը, անգամ երբ տուժողը հետ է վերցնում բողոքը:

Նշվածից բացի՝ խնդրահարույց է նաև օրենքում տեղ գտած հաշտարարության ինստիտուտի կարգավորումները: Հարկ է նկատել, որ միջազգային փորձից ելնելով՝ հաշտարարության ինստիտուտի կիրառումն ինքնին արդյունավետ է բացառապես իրավահարաբերության կողմերի հավասարության պարագայում, ինչը բացակայում է ընտանեկան բռնություն գործադրած և ընտանեկան բռնության ենթարկված անձանց միջև հարաբերություններում: Ընտանեկան բռնության գործերով հաշտարար-

րության կիրառման խնդրահարույց և ոչ արդյունավետ լինելու վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոմիտեն իր № 33-րդ ընդհանուր հանձնարարականում²⁹:

Ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտում է նաև տուժողների համար պաշտպանական բավարար միջոցների բացակայությունը, պետության կողմից տրամադրվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության բացակայությունը, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց անբավարար մասնագիտական պատրաստվածությունն ու իրազեկման պակասը:

²⁸ Տե՛ս նույն տեղում, § 138:

²⁹ Տե՛ս https://tbinternet.ohchr.org/Treaties/CEDAW/Shared%20Documents/1_Global/CEDAW_C_GC_33_7767_E.pdf:

Ի Ն Ձ Ո Ի
ՎԱԿԵՐԱՑՆԵԼ
ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Կոնվենցիան առաջին միջազգային փաստաթուղթն է, որը սահմանում է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ընդգրկուն մեխանիզմներ: Այն նպատակաուղղված է ամբողջությամբ վերացնելու գենդերային հիմքով բռնության նկատմամբ հանդուրժողականությունը:

Կոնվենցիայի վավերացումը պետությանը տալու է ճանապարհային քարտեզ և աջակցության մեխանիզմներ՝ կատարելագործելու ընտանեկան բռնության կանխարգելումն ու նպաստելու է դրա վերացմանը:

Հարկ է նկատել նաև, որ ՀՀ կողմից Կոնվենցիայի վավերացմանն անդրադարձել են նաև միջազգային կազմակերպություններն իրենց դիտարկումներում. դեռևս 2015 թվականին երկրորդ շրջանի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման ժամանակ Հայաստանին առաջարկել են քայլեր ձեռնարկել ընտանեկան բռնության կանխարգելման ոլորտում խնդիրների լուծման ուղ-

ղությամբ³⁰: Իր հերթին կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հարցին է անդրադարձել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա մշակված զեկույցում³¹:

Կոնվենցիայի մշտադիտարկման մեխանիզմներն իրենց հերթին կոչված են լինելու գնահատել պետության գործողություններն ու այդ կերպ ևս աջակցել գենդերային բռնության կանխարգելմանն ու պետության կողմից հետագա շարունակական գործողությունների իրականացմանը:

Կոնվենցիայի վավերացմամբ՝ պետությունը ստանձնում է պարտավորություններ՝ ակտիվ քայլեր ձեռնարկելու ընդդեմ գենդերային բռնության: Այդ քայլերը բազմաոլորտային բնույթ են կրում և իրենց ազդեցությունն են արտացոլում ինչպես օրենսդրական ոլորտում, քաղաքականությունների մշակման գործընթացում, այնպես էլ նոր ծառայությունների ներդրման և առկա ծառայությունները գրհակենտրոն մոտեցմամբ իրագործելու ուղղությամբ:

Այդ պարտավորությունները ներառում, սակայն չեն սահմանափակվում ներքոնշյալ գործողությունների իրականացմամբ.

30 Տե՛ս <https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMIndex.aspx>:

31 Տե՛ս <https://rm.coe.int/-/2018-16-20-/1680920149>:

(հոդված
33-40)

քրեականացնել կամ այլ կերպ պատժելի դարձնել կանանց նկատմամբ բռնության տարաբնույթ ձևերը

(հոդված
29)

տուժողներին տրամադրել պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցներ

(հոդված
30)

տուժողներին տրամադրել ֆինանսական հատուցում

(հոդված
48)

ապահովել, որ արգելված լինեն վեճերի լուծման պարտադիր այլընտրանքային գործընթացները կամ պատիժները՝ ներառյալ հաշտարարությունը և միջնորդությունը

(հոդված
55)

ապահովել, որ դատախազներն իրավունք ունենան հարուցել և շարունակել վարույթը, անգամ երբ տուժողը հետ է վերցնում բողոքը

(հոդված
49)

ապահովել քննության և դատական վարույթի
իրականացումն առանց անհարկի ուշացման

(հոդված
56)

ապահովել, որ տուժողները պաշտպանված լինեն
քննության և դատական վարույթի բոլոր
փուլերում

(հոդված
7)

ունենալ գենդերային բռնության սեգրեգաց-
ված դեպքերով վիճակագրական բազա

(հոդված
57)

ապահովել, որ տուժողներին մատչելի լինեն
իրավաբանական աջակցությունն ու անվճար
իրավաբանական օգնությունը

(հոդված
20)

ապահովել առողջապահական և սոցիալական
ապահովության ծառայությունների մատչե-
լիությունն ու հասանելիությունը

(հոդված
24)

ներդնել անվճար, առանց հանգստյան օրերի,
շուրջօրյա ռեժիմով աշխատող «թեժ-գիծ» ծա-
ռայություն

(հոդված
23)

ստեղծել բավարար քանակությամբ ապաս-
տարաններ բռնության ենթարկված անձանց
և նրանց երեխաների անվտանգության ապա-
հովման նպատակով

(հոդված
15)

իրականացնել մասնագետների շարունակա-
կան վերապատրաստումներ՝ ապահովելու զո-
հակենտրոն մոտեցում ծառայությունների մա-
տուցման գործընթացում

ՀԱՎԵԼԿԱԾ 1

Շահարկում N° 1. Կոնվենցիան հակասում է «Սահմանադրությանը»

Որպես ասվածի հիմնավորում՝ վկայակոչվում է Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասը, 12-րդ հոդվածի 1-ին մասը և 14-րդ հոդվածի 1-ին մասը: 4-րդ հոդվածի 3-րդ մասի վերաբերյալ խոսելիս մշտապես վկայակոչվում է Կոնվենցիայի բացատրական զեկույցի³² 53-րդ կետը՝ նշելով, որ Կոնվենցիայի բացատրական զեկույցը սահմանում է «գենդերային ինքնությունը» հետևյալ կերպ. *«Անձանց որոշ խմբեր կարող են նաև իրենց գենդերային ինքնության հիման վրա խտրականության ենթարկվել, ինչը պարզ ասած նշանակում է, որ սեռը, որով նրանք նույնականանում են, չի համապատասխանում նրանց ծննդաբերության ժամանակ ստացած սեռին: Սա ներառում է մարդկանց որոշակի կատեգորիաներ, ինչպիսիք են տրանսգենդերները, տրանսվեստիտները և այլ մարդ-*

32 Տե՛ս <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800d383a>:

կանց խմբերը, որոնք չեն արձագանքում նրան, որ հասարակությունը սահմանել է որպես «տղամարդկանց» կամ «կանանց» կատեգորիային պատկանող:»:

Մինչ վկայակոչված հոդվածի և ՀՀ Սահմանադրության ենթադրյալ հակասությանն անդրադառնալը՝ հարկ է նկատել, որ Կոնվենցիայի բացատրական զեկույցի 43-րդ կետում հստակ սահմանվում է, որ «Կոնվենցիայի իմաստով՝ «գենդեր» հասկացությունը հիմնված երկու սեռերի՝ արական և իգական, բացառում է, որ կան նաև սոցիալապես ձևավորված դերեր, վարվելակերպեր, գործողություններ, որ հասարակության կողմից ընկալվում են որպես տղամարդկանց և կանանց համար ընդունելի: Հետազոտությունները ցույց են տալիս, որ որոշ դերեր և կարծրատիպեր վերարտադրում են վնասակար պրակտիկա՝ արդարացնելու կանանց նկատմամբ բռնությունը: ...Այս իմաստով՝ «գենդեր» հասկացությունը նպատակ չունի փոխարինել Կոնվենցիայով ամրագրված «կանայք» և «տղամարդիկ» տերմինները:»:

Մեջբերված հատվածից ուղղակիորեն հետևում է, որ Կոնվենցիայում օգտագործվող գենդեր, գենդերային ինքնություն արտահայտությունները չեն ենթադրում այլ սեռի

գոյություն և նպատակ չունեն փոխարինելու «կանայք» և «տղամարդիկ» հասկացությունները:

Անդրադառնալով Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ մասին՝ պետք է նշել, որ այն առհասարակ սահմանում է, որ բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները «պետք է ապահովվեն առանց խորականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամության առկայությունից, ամուսնական դրությունից, միգրանտի կամ փախստականի կամ այլ կարգավիճակից:»: ՀՀ Սահմանադրությանը ենթադրյալ հակասող հատվածը մեջբերված հոդվածում պետության պարտականությունն է բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցներում խտրականության դրսևորման արգելքը՝ անկախ «սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից»: Ասվածի առնչությամբ անհրաժեշտ է նկատել, որ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը հստակ ամրագրում

է, որ առհասարակ «խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»։ Սահմանադրությամբ ամրագրված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից» արտահայտությունն ինքնին բավականին լայն է և ներառում է խտրականությունից զերծ մնալու իրավունքն՝ անկախ «սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից»։ Համանման տարբերակով՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի³³ 14-րդ հոդվածով ամրագրված է, որ «Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկա-

33 Տե՛ս https://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf:

նելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից»։ Ինչպես նկատում ենք, եվրոպական կոնվենցիան, ինչպես և ՀՀ Սահմանադրությունը հատուկ նշում չի պարունակում խտրականության արգելքի մասին սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով, սակայն ասվածը չի ենթադրում, որ խտրականության այդ տարբերակն ընդունելի է համարվում։ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում (*Identoba and Others v. Georgia*³⁴, *M.C. and A.C. v. Romania*³⁵ և այլն) հաստատված է համարել խտրականության դրսևորումը գենդերային ինքնության և/կամ սեռական կողմնորոշման հիմքով և ամրագրել եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածի խախտում:

Անդրադառնալով նույն հարցի վերաբերյալ «հակափաստարկին» *Բուլղարիայի սահմանադրական դատարանի* որոշման առնչությամբ՝ անհրաժեշտ է նկատել, որ թեպետ Բուլղարիայի սահմանադրական դատարանն իր 27.07.2018 թվականի № 13 որոշմամբ³⁶ եզրակացրեց, որ Կոնվենցիան հակասում է Բուլղարիայի Սահմանադ-

34 Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-154400%22%5D%7D>:

35 Տե՛ս <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-161982%22%5D%7D>:

36 Տե՛ս <http://www.constcourt.bg/Acts/GetHtmlContent/f278a156-9d25-412d-a064-6ff6f997310>:

րությանը, այնուամենայնիվ բազմիցս նշվել է այդ որոշման հիմքում առկա քաղաքական ենթատեքստի մասին: Դրա մասին են նշել նաև այդ նույն դատարանի 4 դատավորներ, այդ թվում՝ Ռուսեն Նենկովը, Ֆիլիպ Դիմիտրովը, Կոնստանտին Պենչևը և Գեորգի Անջելովը, որոնք, չհամաձայնելով դատարանի 8 դատավորների արտահայտած դիրքորոշմանը, հատուկ կարծիք են ներկայացրել: Դիմիտրովը քննադատել է դատարանին վիճահարույց «գենդերային գաղափարախոսություն» օգտագործելու համար, իսկ իրենց հերթին Նենկովն ու Անգելովը որոշումը անվանել են «նվեր քաղաքական գործիչներին»:

Շահարկում N^o 2. Կոնվենցիան արմատախիլ է անում սովորույթները/ավանդույթները

Այս շահարկմանն անդրադառնալիս նշվում է, թե իբր Կոնվենցիայի 12-րդ հոդվածը ավանդույթներ, սովորույթներ վերացնելու պարտադրանք է պարունակում: Նշվածի առնչությամբ հարկ է նկատել, որ Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասում հստակ ամրագրված է, որ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն ար-

մատախիլ անելու միայն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մյուս բոլոր երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա: Կոնվենցիան չի պարունակում դրույթ, որով պարտադրում է պետություններին անտեսել իրենց ներմշակույթային առանձնահատկությունները կամ ոչ նյութական մշակույթային արժեքներն ու ժառանգությունը: Անհրաժեշտ է գիտակցել, որ այս հոդվածի տրամաբանությունն ամբողջությամբ ուղղված է բացառապես այն երևույթների վերացմանը, որոնք հիմք են հանդիսանում ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության ձևավորմանը: Կոնվենցիայի բացատրական զեկույցի 43-րդ կետը, անդրադառնալով այդ հոդվածին, նշում է, որ հոդվածով Կոնվենցիան կոչ է անում պետություններին նկատել կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության գենդերային ընկալումը որպես հիմք բոլոր բռնության ենթարկված անձանց պաշտպանության և աջակցության համար: Սա նշանակում է, որ կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության ձևերը պետք է լուծվեն երևույթի բարդության պատշաճ արձագանքման համատեքստում՝ կանանց և տղամարդկանց գերակշռող անհավասարության, առկա կարծրատիպերի,

գենդերային դերերի և կանանց նկատմամբ խտրականության ընկալման համատեքստում:

Ասվածը նշանակում է, որ կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա ձևավորված երևույթները և այդ թվում՝ նախապաշարմունքները, սովորույթներն ու ավանդույթները, պետք է արմատախիլ անել և դրանց գոյությամբ չարդարացնել ընտանեկան բռնությունն ու կանանց նկատմամբ բռնությունը, ինչն առանց բռնության առողջ հասարակության ձևավորման համար կարևորագույն հիմնաքար է:

Շահարկում N° 3. Կոնվենցիան նախատեսում է պրոպագանդա կատարելու պարտականություն և «երրորդ սեռ»-ի վերաբերյալ կրթական մոդուլի ներդրում

Այս գոյություն չունեցող պարտականությունը վերագրվում է Կոնվենցիայի 14-րդ հոդվածի 1-ին մասին, որի համաձայն՝ մասնակից պետությունները, հարկ եղած դեպքում,

պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ միջանձնային հարաբերություններում կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, փոխադարձ հարգանքի և վեճերն առանց բռնության լուծելու, կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերն ընդգրկվեն պաշտոնական ուսումնական ծրագրերում՝ կրթական բոլոր մակարդակներում, և հարմարեցված լինեն ուսումնառողների զարգացող ընդունակություններին: Առհասարակ հարկ է նկատել, որ Կոնվենցիան որևէ հոդվածում, որևէ բացատրական զեկույցում չի օգտագործում «երրորդ սեռ» արտահայտությունը: Այդ հարցին անդրադարձել է նաև Կոնվենցիայի հարցերով Եվրոպայի խորհրդի գործադիր քարտուղարը՝ նշելով³⁷, որ Կոնվենցիայում չկա «երրորդ սեռ» հասկացություն: Ավելին, նույնիսկ այն խմբերը, որոնք նշում են, որ Կոնվենցիան ուղղված է «երրորդ սեռ»-ի ներդրմանը, և «երրորդ սեռ» ասելով նկատի ունեն անձանց, որոնք իրենց չեն նույնականացնում տղամարդու կամ կնոջ հետ կամ նկատի ունեն տրանս կամ ինտերսեքս անձանց, ապա նույնիսկ այդ պարագայում է պետք

³⁷ Տե՛ս <https://vimeo.com/258975674>:

հստակ ամրագրել, որ այդ բոլոր հարցերը դուրս են Կոնվենցիայի կարգավորման տիրույթից:

Խոսելով կանանց և տղամարդկանց միջև հավասարության, կարծրատիպերից զերծ գենդերային դերերի, ինչպես նաև կանանց նկատմամբ գենդերային հիմքով բռնության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հարցերով ուսումնական նյութերի մասին՝ պետք է նախևառաջ գիտակցել, որ առողջ հասարակության ձևավորման համար առաջնահերթություն է ունենալ այնպիսի կրթական համակարգ, որը հիմնված կլինի իրավահավասարության վրա և ուղղված կլինի փոխադարձ հարգանքի և վեճերն առանց բռնության լուծելու գիտակցության ձևավորման վրա:

Շահարկում N^o 4. Կոնվենցիան անսահմանափակ հնարավորություններ է տալիս ԼԳԲՏ* համայնքին և թույլատրում է նույնասեռ անձանց կողմից երեխաների որդեգրում

Նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է հստակ ընդգծել, որ Կոնվենցիան որևէ կերպ չի անդադառնում ԼԳԲՏ* անձանց համար իրավունքներ և/կամ հնարավորություններ սահմանելու հարցին և որևէ կերպ չի քննար-

կում նույնասեռ անձանց կողմից երեխաների որդեգրման հարցը: Անդրադառնալով հարցի կապակցությամբ «զուգընկեր» հասկացության վերաբերյալ շահարկումներին առ այն, որ վերջինիս ներդրումը նպատակ ունի փոխել «ընտանիք» հասկացությունը, հարկ է հստակ ընդգծել, որ Կոնվենցիան չի սահմանում «ընտանիք» հասկացությունը, չի կարգավորում ընտանեկան կյանքն ու չի տալիս ընտանիքի կառուցվածքի վերաբերյալ որևէ մոտեցում: Այն պարզապես ներկայացնում է, որ ինչպես հաշմանդամություն ունեցող կանայք, ազգային փոքրամասնություններին պատկանող կանայք, ՄԻԱՎ-ով ապրող կանայք, այնպես էլ ԼԳԲՏ* համայնքի ներկայացուցիչները կարող են ենթարկվել խտրականության Կոնվենցիայով նախատեսված աջակցության ծառայությունները ստանալիս և պաշտպանական մեխանիզմներից օգտվելիս:

Սույն ամփոփաթերթը պատրաստվել է Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի կողմից «Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան»-ի ֆինանսավորմամբ:

© Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

ԵՐԵՎԱՆ
2020

Ամփոփաթերթը կազմեց
Ստեյլա Չանդիրյանը
Սրբագրիչ՝
Ալետա Հակոբյան
Նկարազարդումը՝
լուսինե թալալյանի

